«ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ին (լիցենզիա թիվ 462) փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա տրամադրելու մասին

2022-06-28

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ

Որոշում թիվ 107 Ա
28.06.2022

«ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ին (լիցենզիա թիվ 462)
փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա տրամադրելու մասին

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ժզ» և «իթ» կետերով, «Ձվարթնոց միջազգային օդանավակայանում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 5-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի մայիսի 15-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» Կանոնակարգ 10-ի 9-րդ կետով, *Հաշվի առնելով* այն, որ «ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ն 19.05.2022թ. և 07.06.2022թ. դիմել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա ստանալու միջնորդությամբ, որի հետ կապված՝ «ԷՔՍՉԵՅՆՋ ԷՔՍՊՐԵՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է համապատասխան փաստաթղթեր, *Հիմք ընդունելով* Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի դրական եզրակացությունը (2022թ. հունիսի 24-ի թիվ 26 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

«ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի (լիցենզիա թիվ 462) թիվ

1 մասնաճյուղին տրամադրել արտարժույթի առուվաճառքի լիցենզիա՝ «ՀՀ, ք. Երևան, Զվարթնոց միջազգային օդանավակայանի ժամանման սրահի ուղեբեռի ստացման գոտի» հասցեում գործունեություն իրականացնելու համար։

«ԷՔՍՉԵՅՆՋ ԷՔՍՊՐԵՍ» ՍՊԸ-ին համարել «ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ին տրված փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիայի հիման վրա արտարժույթի առուվաճառքի գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեցող անձ։

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյան

2022 թ. հունիսի 30, ք. Երևան